

ՔՍԱՆԻՆԵՐՈՐԿ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարեկան 6 րուբ. Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ», Կամ Tiflis, Rédaction «Mschak», S t l t f o n № 253.

Կիւմարութիւնը բաց է առուածան 10—2 ժամ (բացի կիրակի եւ առ օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լրագրով:

Յայտարարութիւնները կամար վճարում են իւրաքանչիւր առաջադրելու 10 կոպէկով. S t l t f o n № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻ ՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Դանդաղ ենք գործում.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նոր պիէս. Նամակ Ալեքսանդրովից. Նամակ Խմբագրութեան. Կերպեր լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակներ Անգլիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՍՏԱԿԱՆ. Ցուցանաչներ:

ԴԱՆԴԱՂ ԵՆՔ ԳՈՐԾՈՒՄ

Թիֆլիսում ներկայումս տեղի ունեցող այդ գործերի մասին տեղեկութիւնները անսահման կերպով շեղում են ընդդէմը և գործնական գիտելիքները տարածման անհրաժեշտութիւնը գիւղական ազգաբնակչութեան մէջ: Բազմաթիւ միջոցներով մէկը, որով կարելի է ազդել ազգաբնակչութեան վրա, դպրոցների կատարած գործունէութիւնն է այդ ապարդեղուն ձիւղ է, մինչև այժմ դպրոցների աշակերտները դեռ չեն կարողացել, իբրև գիւղական համայնքի անդամներ, ազդել ուժեղ կերպով տեղական գիւղատնտեսութեան վրա և հինքը, հասակաւորները դեռ մայրում են հեղինակութիւն գիւղական հարցերում, իրանք առգէն սկսում են նկատվել փոփոխութիւններ մարդկանց հասկացողութիւնների մէջ և նահապետական կարգերի հեղինակութիւնը այլ ևս չէ համարվում անպայման և անքննադատելի:

Փորձը ցոյց է տալիս, որ ոչ միայն գուտ գիւղատնտեսական կրթութիւնը, այլ և ընդհանուր ուսումը—գրագիտութիւնը բարձրար ազդեցութիւն ունեն գիւղական ազգաբնակչութեան վրա և նպաստում են բարեփոխութիւններ մտցնելու գիւղական կեանքում: Այն գիւղերում, ուր բազմացել են գրագէտները, նկատվում է աւելի զինտակցական և քննադատական վերաբերմունքը դէպի համայնքի գործերը և դէպի գիւղատնտեսական պարագայները:

Ռուսաստանի նահանգներից մէկում, այն է Պերսի նահանգում, նորերս փորձ արին գիւղերում գիւղացիներին և տեղիկանստ, թէ ինչպէս է ազդել նրանց անտեսութեան վրա գրագիտութեան տարածումը: Ստացված պատասխանների մեծադոյն մասը վկայում է, որ ուսումը անկասկած կերպով ազդում է գիւղական կեանքի վրա և եթէ շատ տեղ նա աչքի չէ ընկնում, այդ այն պատճառով է, որ նոր հոսանքը դեռ բաւականաչափ ոյժ չէ

ստացել գիւղում, որ կարողանայ գերիշխող դեր կատարել:

Ներկայ ցուցահանդէսը մեկ ցոյց է տալիս, որ մեր գիւղական ազգաբնակչութիւնը դեռ շատ քիչ առաջադիմութիւն է արել իր պարագայում: Մէջ, ուստի անհրաժեշտ է ամեն կերպ նպաստել նոր գիտելիքներ տարածելուն և նախաձեռնութեան ոգի զարգացնելուն գիւղական շրջանում:

Շատ ենք յետ մնացել և սակայն չենք շտապում: Շատ դանդաղ ենք գործում մեր գիւղական ազգաբնակչութեան առաջադիմութեան համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԳԻՒՍ

Երեքշաբթի, սեպտեմբերի 11-ին, Թիֆլիսում ներկայացվել մի նոր պատմական պիէս, որի նիւթը կազմում է Վրաստանի միացումը Ռուսաստանի հետ:

Պիէսի հեղինակը, որ թագուի է Միխայիլ Ժամկուտուի տակ, Թիֆլիսի առաջադասագէտներից մէկն է, սիրող կովկասի պատմութեան և հնագիտութեան:

Պիէսը կոչված է «Подъ сѣнь орла» (Արծուի հովանու տակ) ի նշան այն բանի, որ Վրաստանը մտել է Ռուսաստանի հովանաւորութեան տակ:

Գործողութիւնները կատարվում են Թիֆլիսում ու Պերսիումում եւ ամփոփում են իրանց մէջ Վրաստանի գործիւնը Աղա-Մանաթ-խանի արչաւանքից առաջ և յետոյ, վրաց ազգային մասի արամադրութիւնը դէպի Ռուսաստանը եւ միացման հրովարտակի յայտարարութիւնը:

Պիէսը շարժում է հետաքրքրութիւն. գործում է թեթեւ, ստիւն լեզուով, ազդում է ազդակալի երկարաբանութիւններից, պարունակում է ազդ տեսարաններ և կրում է պատմական ուսումնասիրութեան կնիք իր վրա, բայց բաւականաչափ չէ մշակված եւ չէ թողնում այն տպաւորութիւնը, որ աչքի առաջ ունի հեղինակը:

Պիէսի ամենամեծ թերութիւնը նրա մէջն է, որ պատմական գործողութիւնները, որոնց մասին խօսվում է պիէսի մէջ, կատարվում են ոչ թէ ըստի վրա, այլ ըստից դուրս: Հանդիսակալը սպասում է տեսնելու Վրաստանի, Ռուսաստանի ու Պարսկաստանի այն ժամանակվայ գործողներին և կարծում է, թէ անա

վարագորը կը բացվի եւ նրանք հանդէս կը գան իրանց բնորոշ գծերով, խօսքերով եւ գործերով:

Ներկայացումը տեղի ունեցաւ Արտիստական ընկերութեան թատրոնական դահլիճում: Դերակատարներն էին առաջ սիրողները: Ներկայացումը անցաւ բաւարար կերպով: Հասարակութիւնը քիչ կար:

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՈՒԹ

Սեպտեմբերի 7-ին

Ամսիս 4-ին կայացաւ զուգայի երկրորդ քառամասկի անդամների նիստը, ձայնաւորների նոր կազմով: Թէպէտ նոր ձայնաւորների գոյնը վերջնականապէս դեռ չէ որոշվել, բայց եւ այնպէս կարելի է նախատեսել երկու մեծ կուսակցութիւն, որոնց ուղղութիւնը կապ ունի քաղաքագլխի երկու թեկնածուների անձնաւորութիւնների հետ:

Այդպիսի նեղ գաղափարով առաջնորդվել կարող են միայն Ալեքսանդրովի պէս յետ ընկած քաղաքներում, որտեղ հասարակական գործի վրա նայում են անձնական շահերի տեսակէտից: Եթող քաղաքագլխը լինի մեր մարդը, թող մի քիչ էլ գործերը դանդաղ գրնան, ժամում են մեր ազաները:—Այլ, թող լինի նա մեր սակաւադասը, միայն թէ քաղաքը օգտվի նրա գործունէութիւնից, կը պատահանենք մենք այդպիսիներին:

Քաղաքի հարկաւոր է ոչ թէ «մեր մարդը», այլ ետանդաւոր, անաչաւոր, անախաւոր, քաղաքի (ընդհանուրի եւ ոչ թէ անհատների) շահերը պաշտպանող մարդ, որը ամբողջապէս նուիրված լինի իր ստանձնած գործին եւ ոչ թէ, պատահին հանցանք յետոյ: Թող այդ գործերը, իր օգնակալների վրա յուսաւորվի:

Վերոյիշեալ պահանջներին եղած թեկնածուներից համապատասխանում է պ. Տէր-Պետրոսեան, որ առաջին քառամասկի ընթացքում ցոյց տուց իր ընդունակութիւնը, իբրեւ օգտաւոր քաղաքագլուխ:

Միւս թեկնածուին, պ. Ա. Յովհաննիսեանին, տարաբախտաբար, շատ քիչ ենք ճանաչում, այնպէս որ նրա մասին որ եւ է կարծիք յայտնել անկարող ենք: Ցանկանալով կը լինէր, որ նրան մօտ ճանաչողները լրագրութեան մէջ յայտնէին իրանց կարծիքը, որպէս զի ընտրողները կարողանային երկու թեկնածուներից ընտրել լաւագոյնին:

Ինչպէս լսել ենք, ընտրութիւնները նշանակված են առաջիկայ նիստում: Այդ նիստում էլ պէտք է որոշվի քաղաքագլխի եւ ուպրավայի

որի վրա աւելի շուտ կարելի է ժամել: Ան մի ապարդէղ մեր գաւառական անգործ եւ փափկասուն տիկիների համար, որտեղ նրանք աշխատութեան կարող էին գործել, բայց դրա փոխարէն զբաղված են թղթախաղով, խնձոցներով եւ պճնամուրութեամբ:

Ուշադրութեան արժանի գործերից մէկն է Ջիբրայլի գաւառից զրկած տիկին Բաղդասարեանից գործը 10 արշին երկարութեամբ եւ 6 արշին լայնութեամբ: Տիկինը ինքն է գործել և աշխատել է զրա վրա երեք տարի: Գիւղացիկ են գործի ծայրերը, իսկ մէջտեղը ուսական նկարներից է վերցրած օրինակը: Բացի դրանից կան երկու լաւ գործեր, որոնցից մէկը զրկված է Գեօկչայի գաւառից եւ շատ նուրբ և գեղեցիկ գործուածք է: Կան սովորական կարպետներ, փայտաներ, զիլի, վերնէ, մաֆ-նաչ, խորջին և այլն, այնպէս որ ցուցահանդէս յաճախողը տեսալիների մասին կարող է գաղափար կազմել:

Իրդէ գործուածքների մէջ կան զանազան տեսակ մահուդներ, մինչև անգամ շատ նուրբերը: Դրանց արդէնաբերութիւնը ընկնում է չը դիմանալով գործարանների մրցութեան: Մետաքսէ գործուածքների մէջ առաջին տեղն են ընտրւում Շուշու, Շամախու եւ Գեօկչայի գաւառներից ուղարկված ջեյլիները: Նրանց մէջը կան շատ գեղեցիկ նկարներով ջեյլիներ:

անգամների երկրորդ քառամասկի ոստիկանների հարցը:

Թէպէտ հիշէ է, այդ երկու հարցերը մի նիստում քննադատելու չէ հակասում օրէնքին (§ 128 րորդ. ПОЛОЖЕНІЯ), որտեղ միայն սովոր է, թէ, նախ քան քաղաքագլխի եւ անհամայնքի ընտրութիւն սկսելը, պէտք է որոշել նրանց ոստիկան քանակութիւնը,—բայց, մեր կարծիքով, մի և նոյն ժողովում որոշել ոստիկան եւ թեկնածուների քանակութիւնը աւելի քան անյարմար է.—մի և նոյն է թէ խեղդել օգտաւոր մրցումի սկզբունքը: Մենք չենք ուզում հաւատալ, որ պ. քաղաքագլուխը մէկ նիստի մէջ գետեղած լինի այդ երկու բարդ հարցերը: Մեր կարծիքով, առաջին նիստում պէտք է որոշվի ոստիկան քանակութիւնը, որը պէտք է ընդհանուրին յայտնի լինի, որպէս զի առաջ քան նոր այնպիսի թեկնածուներ, որոնք մինչև այժմ գուցէ չէին զնում իրանց քանակութիւնը ոստիկան քանակութեան պատճառով:

Իսկ ինչ կը վերաբերի ոստիկան քանակութեանը, մենք կարծում ենք, որ անպայման պէտք է աւելացնել թէ քաղաքագլխի եւ թէ անհամայնքի ոստիկանները, որոնցով առաջին անուագին 3,000 րուբլի (մինչև այժմ 2,400 ր.), իսկ անհամայնքին 1,500 ր. (մինչև այժմ 1,000 ր.):

Աւելացնելով պաշտօնեաների ոստիկան, մենք նախ կը գրաւենք գաւառ, ինտելիգենտ համայնքայիններին, որոնց գաւառից փախչելու գլխաւոր պատճառներից մէկը ներթափան անապահովութիւնն է,—միւս կողմից էլ ազատած կը լինենք պատտարանատու պաշտօնները անհամապատասխան ծառայողների ձեռքերից: F. R.

ՆԱՄԱԿ ԽՐԱՎՈՐՈՒԹԱՆ

Բազու, սեպտեմբերի 8-ին

«Մշակ» № 194-ում պ. Կ. Յ. Բաւաշեանի կարծիքը կարծիք նամակը ամենայն իրաւունքով արժանի է մտադրութեան:

Ներքին ինձ մտադրութեան տուրքը հասուցանել ճշմարտութեան և արդարութեան: Մտադրութեան արժանի առաջին, նկատելով պ. Բաւաշեանի գնահատական կարողութիւնը Խմբագրի պատմականագիտական ընթացքը հանդէսի, եւրօպական կեանքի ու կենցաղապարութեան մէջ պայտոյ եկող, իջիմածին և վնաստիկ մէկը միւսի ետեւից տեսած, յարգելի նամակագրի խօսքն, ուրիմն, կշաւոր է եւ գաղափարն ոչ թէ թեւ:

Կողմ անհամայնքի մէջ զննելով իջիմածին և վնաստիկ, պ. Բաւաշեան էլ միմիայնակներին օգն է թողնում: Ընթացողը առաջ Արարատեան վեղարները պարարտ են երեւում օւսեան ջեյլի մի արդէնաբերութիւնն էլ ընկնում է, որովհետեւ գործելու եղանակը նահապետական է, իսկ գիւղացու պահանջները զնալով աւելանում են, ուստի եւ նրան ձեռնառն չէ շատ ժամանակ կորցնել զրա վրա: Գիւղացին աշխատում է մի ցուլի ձեռնառն գործ սկսել: Օրինակ, Շուշու գաւառում իրանց ջեյլիներով յայտնի Լեւաթարան եւ Աղջաբաղի գիւղերում այժմ այդ եւ կին զբաղված են բամբակի պլանտացիաներում, եւ եթէ այնտեղ գործողներ կան, այն էլ միմիայն իրանց համար է:

Բոլորովին ուրիշ բան է ներկայացնում Գուրթայի մետաքսագործական ընկերութիւնը: Նրա ի ցոյց դրած նմուշները գործարանների պարանքներից փառ չեն իրանց նրբութեամբ և գեղեցկութեամբ: Այդ ընկերութիւնը գոյութիւն ունի 5 տարի. անհամայնքի թիւը 9000-ից անց է, անդամավարն է 10 րուբլի. 2—3 րուբլի զիւլիգնում է ստացվում: Ընկերութիւնը գտնվում է Գուրթայի գաւառի Գոմի գիւղում: Ընկերութիւնը բերել է տուել Մարտլիցի հնուտ վարպետներ, իսկ այժմ կան տեղացի վարպետներ: Ընկերութիւնն ունի իր խանութը, ուր ծախում են ընկերութեան արտադրած մետաքսեղենները: մի խօսքով, Գուրթայի մետաքսագործները մեղ յիշցնում են աւելի շուտ Մոսկովի եւ Սարատովի անայ-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՑՈՒՑԱՀԱՆԳԻՍՏ

VIII

Տնայնագործական բաժինը կազմում է ցուցահանդէսի VIII մասը եւ իր մէջ պարունակում է հետեւեալ բաժինները: 1) բրդեղէն, մետաքսեղէն, բամբակի եւ այլ գործուածքներ, 2) փայտեղէն, կաւեղէն, երկաթեղէն եւ այլ զանազան մետաքսներից շինած իրեղեններ, 3) ասեղնագործ պատկերներ, զանազան նուրբ գործուածքներ եւ բանուածքներ, 4) արհեստաւորների ներկայացրած իրեղեններ, որոնք իսկապէս վերաբերում են արհեստների բաժնին:

I. Սկսենք բրդեղէնից: Դրա մէջ առաջին տեղն են ընտրւում գործերը, որոնք գրեթէ կովկասում ամեն տեղ գործվում են եւ որոնցով մեր երկրը անուանի է: Բայց, դժբաղդաբար, ցուցահանդէս յաճախողը պէտք է ապչել տեսնելով գործերի ազատ հաւաքածուն: Դրկված են ամենալաւ գործերը, եթէ չը հաչենք մի քանիք: Դրա պատճառը այն է, որ ցուցահանդէսի վարչութիւնը չէ ունեցել իր գործակալը, որ չըլէր գաւառները եւ զրկէր բացի վատերից եւ լաւերը: Բացի դրանից, շատերը

լով, վտիտ եւ ողորմելի են գիտութեան արդիւնքով եւ քաղաքավարութեամբ:

Ես նպատակ չունեմ էջմիածնեցիներէն ջատագով հանդիսանալու, ի նպատակ նրանց փաստաբանելու, քաջ գիտեցաւ որ նրանք ինչ որ են՝ մեր պատկերն են. իսկ մենք աւելի երեսկուս ձգտողներ ենք զան գործելու, աւելի ետալարութիւն ունենք զան քաղաքավարութիւն: Իսկ իմ նպատակն է, որպէս ասացի վերեւում, հասուցանել իմ պարտ տուրքը:

Ինձ այնպէս եկաւ, որ պ. Բաճակեան բաղդատում է իրար հետ երկու ոչ-նման մեծութիւններ եւ այն էլ տարբեր պայմաններում:

Ս. Ղազարի վանքը մի արաններ զանք է, նա ներկայացնում է մի գիտական, ձեւաբանական ընկերութիւն, որ լուսոյ տաճարի դռները նստած՝ նպատակ ունի ազօթել լոյսի աղբիւր Ամենագէտին եւ նրա լոյսը տարածել զէպի վայր, զէպի վեր եւ զէպի շուրջ բոլոր: Նա մի կնքոված պարտէջ է, ուր այցելուներն ելեւեռու չեն անում անդադար, ուր միտքն ամփոփ է եւ սիրան անդադր: Նա ժիր վաստակներն էր մի փեթակ է, որտեղից մեղուները դուրս են թռուում ծաղկածողովի եւ վերադառնում են հիւթաբարձ:

Այդպէս է էջմիածինը: Նա մի պաշտօնարան է, կենտրոնավայր է պաշտօնեաների. նա մի աստեղատեղի է, ուր անդադար ելեւեռու են անում ազմով ու ժխտով ուլ ասես, հրեղիցի պատ. Նա մի քարափայտայն է ուխտաւորներ, ճանապարհորդներ, նա յաճախ եւ անկեղծաց է անտուն ու անտէր պանդուխտներ, մերթ ընդ մերթ անպաշտն եւ անպաշտպան եկուորներ, որոնք ապաւեն են որոնում ազգային տան մէջ: Այստեղ մտքի ամփոփումն եւ օրտի անդորրութիւն Աստուած տայ: Այստեղ գրաւոր վաստակ միայն յարգելի բացատրութեան երեւոյթ կարող է լինել: Գարձնալ, այստեղ կոշտի եւ կոպիտի հետ են չիփում վաստակները եւ կոշտ ու կոպիտ են ընդհարումները, այդ իսկութիւնն է: Էջմիածնի շուրջը ուսման թիւն է, հող եւ մոխիր եւ քաղաքային՝ ամբողջը: Ս. Ղազար ծովային թագաւորի վեներտիկն ունի կողքի եւ ս. Մարկոսի տաճարը եւ Դոմէրի պալատը եւ Ազրիկանը եւ Իտալիան Հաճովի եւ համայն Եւրոպան իր բոլոր լուսաւորութեամբ եւ քաղաքակիրթ նորութեամբ:

Ս. Ղազարը գիտութեան ձեւաբան է եւ նորարարական ազդեցութեան մենաստանական քաղաքավարութեամբ՝ Եւրոպայի գրկում: Էջմիածինը վարչարան է, պաշտօնեաների կայան, աշխարհի ծայրերից եկող գոհ ու դժգոհ վեղարներ հանգրիւման տեղ, աշխարհամուտ դուռն, Ասիայի գրկում՝ ուր առաջին գիտութիւնն ու քաղաքավարութիւնն ընկերին հանդերձներ բեռնից թեթեւացնելու եւ պատար բերանը տանելու աշխատութիւններից ազատ անելն է:

Այս միջավայրի մէջ ս. Ղազարի վանքի յատկութիւններն անգրկու են: Եւ ասկան էջմիածինը, ինչ կասկած, կարող է անհամեմատ աւելի լուս լինել, զոտուրքն անտար Կազար մզօններից բարձր, իսկ արքայութիւնից հարկաւ բաւական քաջ, եթէ միայն մենք, պահանջողներ, գրող եւ ընթերցող, դործն աւելի գնահատենք զան խօսքը:

Դատող խելքին հաւասար դնենք սիրող սիրտը եւ գործակցող՝ ձեռքը:

Մենք մեզ լուսացնենք, մեր ընտրած հոգեւորականներն էլ լուս կը լինեն:

«Մուռ աղօս մեծ եզնէն է», ասում է ժողովուրդը:

Ա. Մ. Եղեկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԻ

Եկող տարվանից Կովկասում մտադրութիւն կայ բժիշկների համագումար ժողով գումարելու օտարական հանրային ջրերը եւ բուժիչ տեղերը բարոքելու համար:

Թիֆլիսում արդէն սկսվել են քաղաքը զարդարելու աշխատանքները՝ որպէս նախապատրաստութիւն առաջիկայ յօրեխանական հանդէսների, որոնք տեղի են ունենալու այս ամստեճար ամսի 25—28-ին:

Միօնի մայր եկեղեցու աւագ քահանայ Եւլիսի Գիւմի է Թիֆլիսի քաղաքային դումային եւ խնդրել է 1,500 բուրլու տարեկան նպաստ նշանակել եկեղեցուն՝ երգեցիկ խումբ պահելու համար: Եւլիսի աւագ քահանան իր խնդրքը պատճառաբանում է նրանով, որ Միօնի մայր եկեղեցին ներթափանց միջոցների պակասութիւն է զգում այդպիսի խումբ պահելու:

Կայրերի ուսումնարանի պալիլիօնում, որ ցուցահանդէսի հետաքրքրական բաժանումը ներքից մէկն է, իւրաքանչիւր երեքաբլի եւ հինգաբլի օրերը տեղի են ունենում կայրերի ընթերցանութիւն, գրութիւն եւ արհեստի զբաղմունքներ, իսկ կիրակի օրերը—միայն ընթերցանութիւն եւ գրութիւն:

Երկրագործութեան միջնորդութեան կողմից Արխանգելսկի նահանգը ուղարկված երկրաբանների մի խումբ, ինչպէս հաղորդում է «ДОНЕС. РЫБЪ» լրագիրը, գտել է նաւթաբեր հորեր ընդարձակ տարածութիւններ:

«Рус. Вѣд.» լրագրի ասելով, Պետերբուրգի հասարակարանի արեւելեան լեզուների ֆակուլտետի առաջին կուրսը մտել են այս տարի 60 հոգի: Սա առաջին դէպքն է, որ այսքան բազմաթիւ անձինք մի տարվա ընթացքում ցանկութիւն են յայտնում մտնելու այդ ֆակուլտետը: Սովորաբար, իւրաքանչիւր տարի մտնողների թիւը 10—15 հոգուց աւելի չէր լինում եւ միայն 1880 թուին, իբրեւ բացառութիւն, մտնողների թիւը 19 էր: Այս երեւոյթը բացատրվում է այն նկատառումներով, որ զարթոթեցրել հասարակութեան մէջ վերջին անցքերը արեւելքում:

Պետերբուրգում հրատարակվեցին ժամանակակից կանոններ հոգեկան հիւանդներին, կատարած չնրեի կծաններին եւ բորոններին երկաթուղիներով փոխադրելու մասին: Այն անձինք եւ հիմնարկութիւնները, որոնք ցանկանում են երկաթուղով ուղարկել այդպիսի հիւանդներին, պարտաւոր են այդ բանի մասին յայտնել երկաթուղու վարչութեանը կամ կայսրին գլխաւորին ուղարկելուց 48 ժամ առաջ: Կատարել կենդանիները կծովածները, որոնք ուղարկվում են կծված լինելուց երկու շաբաթ յետոյ, պէտք է մէկ ուղեկցով լինեն, իսկ երկու շաբաթ լրանալուց յետոյ՝ երկու ուղեկցիներով, բորոնները փոխադրվում են մէկ ուղեկցով առանձին վագոնով:

Ինչգիտելի գեղեցիկ ձեւափայտաբեր եւ այլ իւրերը:

Բացի այդ առարկաներից, կաշուեղէնի բաժնում գրված են զանազան ձեւի եւ մեծութեան ոտնամաններ, որոնք գործ են անվում մեր երկրի զանազան մասերում:

III. Ասեղնագործ աշխատանքների մէջ առաջին տեղը պէտք է տրվի տ. Իլմիրեանցին: Նա պատկերներ, որոնք իրանց գեղեցիկութեամբ գրաւում են բոլորի ուշադրութիւնը: Վատ չէ նախաձեռն գորգը: Քուրթայից մի հայ օրիորդ լրկել է մի քանի պատկերներ, որոնց մէջ շատ լաւ է մի պէյզաժ, որ նախաձեռն է մեծաբոյ թեթեւով: Գեղեցիկ են մի վրացուհու ձեռագործ երկու պատկերները—մէկը վրաց բանաստեղծ Շոթա Ռուսթամի պատկերն է, իսկ միւրը՝ Պուշկինի. բացի դրանցից, կան մեծ զանազանութեամբ նախաձեռն պատկերներ, բարձր, մութաքաներ եւ զանազան իրեր:

IV. Բաժնից արհեստաւորներին է Գրանք գրեթէ բոլորն էլ ունեն իրանց վիրտիսաները: Այդպէս կան օսկերէներ, կոչիկարներ, զբլիտակ կարողներ, զարդերներ: Ամենից լաւը Օբոյանցի ցուցադրած խոզանակներն են. դրանց մէջ կան զանազան ձեւի գեղեցիկ խոզանակներ: Արհեստաւորների մի մասը ու-

Ներկագործութեան եւ պետական կալուածների մինիստրը հետադրով տեղեկութիւն տուեց կովկասեան գեղատնտեսական ընկերութեան, որ մինիստրութեան կողմից ուղարկվում է կովկաս իսկական պետական խորհրդական Սալոմոն, իբրեւ էքսպէրտ, մասնակից լինելու ցուցահանդէսի այգեպանական եւ գինեգործական բաժնի առարկաների գնահատութեանը:

Սովկայի լրագիրները հաղորդում են, թէ Եւլիսի Գիւմի ընդհանուր Ե. Ն. Տոլստոյ իր ամուսնու եւ աղջկաներից մէկի հետ ուղևորվել է Սովկայից դէպի Խրիստո Տոլստոյ նորերումս վերջացրել է մի հրապարակախօսական յօդուած «Միակ միջոց» վերնագրով եւ այժմ աշխատում է «Մերօւնիներ» վէպի վրա:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Սովկայում տեղեկութիւն է ստացված, որ այժմեանից բոլոր կալուածական բանկերում, ընտրովի դիրեկտորներին հետ միասին, կը նշանակվեն առանձին դիրեկտորներ կառավարութեան կողմից: Սովկայի կալուածական բանկում արդէն նշանակվել են այդպիսի դիրեկտորներ:

«Прод. Край» լրագրի խօսքով, սեպտեմբերի 1-ին լրացուց Բիգայի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողների դասավանդմանը մտցնելու ժամանակամիջոցը: Մտ 540 ուսանողներ չը կարողացան մտցնել վճարը իր ժամանակին եւ այդ պատճառով նրանք արձակված են համարվում ինստիտուտից: Նրանք միջնորդում են յետաձգելու դասավանդմանը մտցնելու ժամանակամիջոցը:

Ինչպէս լսել են մայրաքաղաքի լրագիրները, բոլոր հողային բանկերի համար կառավարութեան կողմից կը նշանակվեն առանձին դիրեկտորներ, որոնք կը կատարեն վարչութեան նախազանի պաշտօնը:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ խոշոր գրքատեղերից մէկը, իլլան Տ., միջնորդութիւն է յարուցել Պետերբուրգում կամ Սովկայում հիմնելու մի մասնաւոր գրքաձուլարի ղարդը, ուր ընդունվելու են մինչև չե 35 տարեկան հասած անձինք: Վերջինից կը պարտաւոր լինեն կը տայ ջիմիայի, գիւղատնտեսութեան, մեքենայագիտութեան, ուսուցիչ եւ օտար գրականութիւնների, պատմութեան եւ ուրիշ առարկաների մասին: Այդ ղարդը ուսումնարաններին ոչինչ իրաւունք չի տայ:

ՇԻՐԱԿԻՑ մեզ գրում են. «Շիրակում օրվայ խօսակցութեան առարկան մեծ-դարաքի լիսեցի Սարգիս Առաքելեանի անհետանում է: Չը նայելով իլլանութեան ձեռք առած խիստ եւ հոռուցում միջոցներին, մինչև օրս չեն գտել նրա դիակը: Առաքելեանը օգտատու ամսի 1-ին Մեծ-Ղարաքիլիսա գիւղից երկաթուղով գալիս է Կուրայեայ կայարանը, որտեղ իջնում է, ալիւրի քանկները եւ իր վրայի վերաբարկուն պահ է տալիս կայարանի գլխաւորին, ինքը գալիս է Արգինա, որ ձի տանէ, իրի բաժնիներում է գտնվում:

Բացի այս բոլորից, XII բաժնում աչքի են ընկնում Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան վիրտիսան, որ բաւական լաւ աշխատանքներ է ի ցոյց դրել, եւ Տ. Եակոպի ցուցադրած գեղեցիկ ձեռագործ աշխատանքները: Հնուաբարական է տեսնել Աղջիկների ապաստարանի սաների ժանեակէ գործուածքները: Իչո. Մ. Թումանեանց զրկել է ի ցոյց մի պարսկական հին նարդի, որը XII բաժնում առանձնաբար գիտեցի մինը կարող է համարվել: Յիշատակենք նաեւ հետեւեայ իրերը: Պ. Մ. Լայպանցի մագի թելերով նախաձեռն կարը, որը գնահատվում է հազար բուրլի: Քուրթայից ուղարկված տ. Խոջայեանցի մեծաբոյ շաբաթ սեղանը. մի տիկնոջ ի ցոյց դրած քարերով մեծ ճաշակով զարդարած սեղանը. տ. Պապէի եւ տ. Սարգսեանցի չինած ծաղիկները. պ. Պապի եւ մի այլ պարտիզ զամբիւղները՝ առաջինը յարդից, երկրորդը՝ մեծաղեայ թելերից, համբերի ձեռագործները: Սէր-Ալի-Մամուդ օղուի վիրտիսան կախած պայտակ զօրգը եւ անմեկ պայտերը:

Թանգազին իրերի մէջ գեղեցիկ են Արիստակէսեանցի արծաթի վրա փորագրած «Մեծն Պետրոսը արկեծեալ ծովում» պատկերը, որ շատ նուրբ գործ է ներկայացնում, երեք արկեղներ պ. Սրապեանցի, Սերգեանցի եւ Իբ-

տոպարկները բերէ: Գալիս է Արգինա օրըցերեկով, ժամը 12-ին, եւ անհետանում է: Հանգուցեայը 25 տարեկան երիտասարդ էր, երկու տարվայ ամուսնացած, պարսպում էր հացի առեւտուրով, մտքը եղած է, իր հօր եւ եղբայրների ասելով, 1,400 բուրլի փող: Անյայտացածի ծերունի հայրը եւ հինգ եղբայրներ իրանց բարեկամների հետ այս 20 օր է, որ Արգինա գիւղում ձեռքերը ծալած լայով ման են գալիս: Կարծի նահանգապետ այդ մասին խիստ հրաման է արձակել եւ ուղարկել է առանձին պաշտօնեայ, որ անպատճառ գտնէ ինչպէս անյայտացածի դիակը, նոյնպէս եւ նրան վնասողներին. անյայտացածի իրեղէններէց մի մասը գտնվել է: Յոյս կայ, որ շուտով կը պարզվի ամբողջ գործը, երեւան հանելով եւ անյայտացնողներին:

ԳԻՂԱՆ գիւղից մեզ գրում են. «Երկուշաբթի, սեպտեմբերի 10-ին, երեկոյան 7 ժամին, երկիրը ծածկվեց սեւ ու մաշկ ամպերով եւ ապա սկսեց կարկուտ տեղալ ընկողի մեծութեամբ: Բարեբաղդաբար, կարկուտը երկար չը տեսեց, բայց եւ այնպէս անազին վնաս հասցրեց տեղական այն բազմաթիւ այգիներին, որոնց մէջ խաղողը դեռ եւս չէր քաղված: Վը նստը մի քանի աստեղեկ հազար բուրլու է հասնում: Գիւղացիք, որոնց ապրուստի միջոցներից զիւստըրը գինեգործութիւնն է խաղողի վաճառումն է, յուսահատութեան մէջ են»:

ԲԱՒԱՅԱՆԻՑ մեզ գրում են. «Միթարեան միաբանութեան երկհարիւրամեայ յօրեխանի առթիվ Բալխասի ի մի խումբ հայ երիտասարդներ ուղարկել են հետեւեայ հետադիրը: «Խոնարհվելով ուխտից երկհարիւրամեայ ազդեցութեան գրական գործունէութեան առաջ, մենք, Բալխասիի մի խումբ հայ երիտասարդներ, ուղարկում ենք ձեզ մեր սրտագին ողջոյնը, ցանկանալով տեսնել ս. Ղազարում այստեղեւեռ շատ Արխանգելի ի փառս հայ աշխարհի եւ սրբազան ուխտիչ»:

ԻԳԻՐԻՑ մեզ գրում են. «Շիրակում եւ չրվակայ գիւղերում ծանծաղուտ կամ, ինչպէս մեր ժողովուրդն է ասում, «զընձա հողերը» անազին ընդարձակ տարածութիւն են բռնում: Յասային այն է, որ տարեցտարի աւելի տարածվում եւ նոր-նոր հողեր է կանոնում ծանծաղը, միանգամայն անպէտքացնելով հողը վար ու ցանքի համար: Այս հասրաճանքը շատ վաղուց արդէն ուշադրութիւն էր գրաւել դեռ նոյն իսկ Փիրուսեան եւ Խանաղեան դասաւանդների ժամանակներում, բայց մի-միայն վերջին տարիներս, ներկայ դաւաճապետ պ. Բօգոսլովիւու օրով, այդ խնդիրը հերթական դարձաւ եւ փոքր ի շատէ գործնական հողի վրա զրկեց: Դա այնպիսի մի խնդիր է, որի հետ անմիջապէս կապված է ժողովրդի տնտեսական դրութիւնը: Շատ պարզ է, որ եթէ այդ անպէտքացած հողերը չորացնեն, կամ, ինչպէս ժողովուրդն է ասում, «զընձաբեչ» անեն, զանազան տեղերից փոքրիկ ջրանցքներ բանալով, անազին օգուտներ կարող է ունենալ մեր ժողովուրդը: Երեւակայէք, միմիայն իրողութեամբ 700 դեռեատին են հաշուում «զընձա»

րախ-օղուի աշխատանքները, առաջին երկուսը լաւ են իրանց նորութեամբ, բայց երրորդը աւելի ճաշակով է: Շաշախովի ծխախոտի ամանը եւ դաշտները. բազուից ստացված մի մանեակ 2500 ր. արծողութեամբ. պ. Արգուն մանեակի ներկայացրած շաների զարդարանքների ժողովածուն. մի գօտի արծաթից, որը մի պուղաչափ ծանրութիւն ունի:

Այցելուների ուշադրութիւնն ենք դարձնում Մեծ Իլլանի սենեակում կախված չորս գորգերի վրա, որոնք թէեւ Կովկասեան արտադրութիւն չեն, բայց հետաքրքրական են իրանց ռժով եւ գործուածքով:

Վերջացնելով նկարագրութիւնը, պէտք է ասենք, որ ընդհանուր առմամբ այս բաժնի բոլոր յաճախողների վրա շատ լաւ տպաւորութիւն է թողնում. գեղեցիկ զարդարված են թէ բաժնի եւ թէ նրան կից բազարը:

Եթէ ի նկատի ունենանք ժամանակի սղութիւնը եւ մասնաւորապէս այս բաժնի կազմակերպելու դժուարութիւնը, այն ժամանակ դարձեալ պէտք է զարմանանք, թէ ինչպէս այս բաժնի կազմակերպողը, պ. Փերալեանց, կարողացել է այդ գործը զրուխ բերել, յաղթելով այդ դժուարութիւններին:

Ե. Կարա-Մուրզա



